ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/48-44-20

ք. Երևան 24.02.2020թ.

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս նախարարության **գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ա. Խառատյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Կ. Սուքիասյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3 560 670 (Երեք միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար վեց հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու

դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս
պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12

Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 ՀՎՀՀ՝ 900011033504 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն ՀՎՀՀ՝ 02698604 ---------- Ա. Խաչատրյան (ստորագրություն) Կ.Տ.	«Պատրոն ՌՄ» ՍՊԸ Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 18/2, «Էվոկաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1660000446270100 ՀՎՀՀ 00861057 ---------- Կ. Սուքիասյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
24.02. 2020 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/48-44-20

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի												
հրավեր-ով նախա-տես-ված չափա-բաժնի հա-մարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկա-գիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվա-նումը	ապրանքայի ն նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	Չափ-ման մի-ավորը	միավոր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդ-հա-նուր քան-ակը	Մատակարար-ման		
									հաս-ցեն	ենթակա քանակը	Ժամ-կե-տը**
1.	30121500/15	Քարթրիջներ	Hewlett-Packard 55X (CE255X)	**Քարթրիջ HP 55X (CE255X)** Էյչ Փի 55էքս (ՍիԻ255էքս) **Основные характеристики** Հիմնական բնութագրերը **Производитель** Արտադրող: **HP** Էյչ Փի **Модель** Մոդել: **CE255X (№55X) (экономичный)** ՍիԻ255էքս (№55էքս) (տնտեսող) **Тип оборудования** Սարքի տեսակը: **Черный Картридж** Սև քարթրիջ **Описание** Նկարագրությունը: **Оригинальный картридж** Բնօրինակ քարթրիջ **Ресурс** Ռեսուրս: **12500 страниц** 12500 էջ	հատ	133860	803160	6	Կառա-վարա-կան 3-րդ շենք	6	II եռամ-սյակ
2.	30121500/16	Քարթրիջներ	HewlettPackard HP 80X (CF280X)	**Քարթրիջ HP 80X (CF280X)** Էյչ Փի 80էքս (ՍիէՖ280էքս) **Основные характеристики** Հիմնական բնութագրերը **Производитель** Արտադրող: **HP** Էյչ Փի **Модель** Մոդել: **CF280X (№80X) (экономичный)** ՍիէՖ280էքս (№80էքս) (տնտեսող) **Тип оборудования** **Черный Картридж**	հատ	101850	1018500	10	Կառա-վարա-կան 3-րդ շենք	10	II եռամ-սյակ

				Սարքի տեսակը **Описание** Նկարագրությունը **Ресурс** Ռեսուրս Սև քարթրիջ **Оригинальный картридж** Բնօրինակ քարթրիջ **6900 страниц** 6900 էջ						
3.	30121500/17	Քարթրիջներ	Hewlett-Packard HP 53A (Q7553A	**Քարթրիջ HP 53A (Q7553A)** ԷյՔՓի 53Էյ (Քյու7553Էյ) **Основные характеристики** Հիմնական բնութագրերը **Производитель** Արտադրող **hp** ԷյՔՓի **Модель** Մոդել **Q7553A (№53A)** Քյու7553Էյ (№53Էյ) **Тип оборудования** Սարքի տեսակը **Черный Картридж** Սև քարթրիջ **Описание** Նկարագրությունը **Оригинальный картридж** Բնօրինակ քարթրիջ **Ресурс черного картриджа или контейнера с черными чернилами** Սև քարթրիջի պաշար կամ բեռնարկղ սև թանաքներով **3000 страниц** 3000 էջ	հատ	61110	122220	2	Կառավարական 3-րդ շենք	2	II եռամսյակ
4.	30121500/18	Քարթրիջներ	Hewlett-Packard CE411a (cyan)	Քարթրիջ **CE411a (cyan)** ՍԻԻ411Էյ (երկնագույն) **Модель** Մոդել **HP CE411A (№305A) (голубой)** Սի Ի 411Էյ (Հ 305Այ) (երկնագույն) **Тип оборудования** Սարքավորման տեսակը **Голубой Картридж** Երկնագույն քարթրիջ **Описание** Նկարագրություն **Оригинальный картридж** Բնօրինակ քարթրիջ **Ресурс черного картриджа или контейнера с черными чернилами** Սև քարթրիջի պաշար կամ բեռնարկղ սև թանաքներով **2600 страниц** 2600էջ	հատ	69840	69840	1	Կառավարական 3-րդ շենք	1	II եռամսյակ
5.	30121500/19	Քարթրիջներ	Hewlett-Packard HP CC530A	**Քարթրիջ HP CC530A (black)** ՍԻՍԻ530Էյ (սև) **Քարթրիջ CC530A** ՍԻՍԻ530Էյ **Производитель** Արտադրող **HP** ԷյՔՓի	հատ	78570	78570	1	Կառավարական 3-րդ շենք	1	II եռամսյակ

<table>
<tr>
<td></td>
<td></td>
<td></td>
<td></td>
<td>
<table>
<tr><td>Модель
Մոդել</td><td>CC530A (№304A)
ՍԻՍԻ530Է (№304 Է)</td></tr>
<tr><td>Тип оборудования
Սարքի տեսակը</td><td>Черный Картридж
Սև քարթրիջ</td></tr>
<tr><td>Описание
Նկարագրություն</td><td>Оригинальный картридж
Բնօրնակ քարթրիջ</td></tr>
<tr><td>Ресурс
Ռեսուրս</td><td>3500 страниц
3500 էջ</td></tr>
</table>
</td>
<td></td>
<td></td>
<td></td>
<td></td>
<td></td>
<td></td>
</tr>
<tr>
<td>7.</td>
<td>30121500/21</td>
<td>Քարթրիջներ</td>
<td>Hewlett-Packard HP CF361A (cyan)</td>
<td>
Քարթրիջ HP CF361A (cyan)
Էյջ Փի ՍԻԷֆ361Է (երկնագույն)

<table>
<tr><td colspan="2">Քարթրիջ CF361A
ՍԻԷֆ361Է</td></tr>
<tr><td>Производитель
Արտադրող</td><td>HP
ԷյջՓի</td></tr>
<tr><td>Модель
Մոդել</td><td>CF361A (№508A) (голубой)
ՍԻԷֆ361Է (№508Է) (երկնագույն)</td></tr>
<tr><td>Тип оборудования
Սարքի տեսակը</td><td>Голубой Картридж
Երկնագույն քարթրիջ</td></tr>
<tr><td>Описание
Նկարագրություն</td><td>Оригинальный картридж
Բնօրինակ քարթրիջ էյջփի</td></tr>
<tr><td>Ресурс
Ռեսուրս</td><td>5000 страниц
5000 էջ</td></tr>
</table>
</td>
<td>հատ</td>
<td>119970</td>
<td>119970</td>
<td>1</td>
<td>Կառա-վարա-կան 3-րդ շենք</td>
<td>1</td>
<td>II եռամ-սյակ</td>
</tr>
<tr>
<td>8.</td>
<td>30121500/22</td>
<td>Քարթրիջներ</td>
<td>Hewlett-Packard HP CF362A (yelow)</td>
<td>
Քարթրիջ HP CF362A (yelow)
Էյջ փի ՍԻԷֆ362Է (դեղին)

<table>
<tr><td colspan="2">Քարթրիջ CF362A
ՍԻԷֆ362Է</td></tr>
<tr><td>Производитель
Արտադրող</td><td>HP
ԷյջՓի</td></tr>
<tr><td>Модель
Մոդել</td><td>CF362A (№508A) (желтый)
ՍԻԷֆ362Է (№508Է) (դեղին)</td></tr>
<tr><td>Тип оборудования
Սարքի տեսակ</td><td>Желтый Картридж
Դեղին քարթրիջ</td></tr>
<tr><td>Описание
Նկարագրություն</td><td>Оригинальный картридж
Բնօրինակ քարթրիջ</td></tr>
<tr><td>Ресурс
Ռեսուրս</td><td>5000 страниц
5000 էջ</td></tr>
</table>
</td>
<td>հատ</td>
<td>119970</td>
<td>119970</td>
<td>1</td>
<td>Կառա-վարա-կան 3-րդ շենք</td>
<td>1</td>
<td>II եռամ-սյակ</td>
</tr>
</table>

<table>
<tr>
<td>9.</td>
<td>30121500/23</td>
<td>Քարթրիջներ</td>
<td>Hewlett-Packard HP CF363A (magenta)</td>
<td>
Քարթրիջ HP CF363A (magenta)
Էյչ փի ՍԻԷֆ363Էյ (կարմիր)
<table>
<tr><td colspan="2">Քարթրիջ CF362A
ՍԻԷֆ362Էյ</td></tr>
<tr><td>Производитель
Արտադրող</td><td>HP
Էյչ Փի</td></tr>
<tr><td>Модель
Մոդել</td><td>CF362A (№508A) (желтый)
ՍԻԷֆ362Էյ (№508Էյ) (դեղին)</td></tr>
<tr><td>Тип оборудования
Սարքի տեսակ</td><td>Желтый Картридж
Դեղին քարթրիջ</td></tr>
<tr><td>Описание
Նկարագրություն</td><td>Оригинальный картридж
Բնօրինակ քարթրիջ</td></tr>
<tr><td>Ресурс
Ռեսուրս</td><td>5000 страниц
5000 էջ</td></tr>
</table>
</td>
<td>հատ</td>
<td>119970</td>
<td>119970</td>
<td>1</td>
<td>Կառա-վարա-կան 3-րդ շենք</td>
<td>1</td>
<td>II եռամ-սյակ</td>
</tr>
<tr>
<td>10.</td>
<td>30121500/24</td>
<td>Քարթջներ</td>
<td>Hewlett-Packard HP CC530A</td>
<td>
Քարթրիջ HP CC530A
Էյչ փի ՍԻՍԻ530Էյ (սև)
<table>
<tr><td colspan="2">Քարթրիջ HP CC530A
ԷյչՓի ՍԻՍԻ530Էյ</td></tr>
<tr><td>Производитель
Արտադրող</td><td>HP
Էյչ Փի</td></tr>
<tr><td>Модель
Մոդել</td><td>CC530A (№304A)
ՍԻՍԻ530Էյ (№304 Էյ)</td></tr>
<tr><td>Тип оборудования
Սարքի տեսակը</td><td>Черный Картридж
Սև քարթրիջ</td></tr>
<tr><td>Описание
Նկարագրություն</td><td>Оригинальный картридж
Բնօրնակ քարթրիջ</td></tr>
<tr><td>Ресурс
Ռեսուրս</td><td>3500 страниц
3500 էջ</td></tr>
</table>
</td>
<td>հատ</td>
<td>78570</td>
<td>78570</td>
<td>1</td>
<td>Կառա-վարա-կան 3-րդ շենք</td>
<td>1</td>
<td>II եռամ-սյակ</td>
</tr>
<tr>
<td>11.</td>
<td>30121500/25</td>
<td>Քարթջներ</td>
<td>Hewlett-Packard CC531A</td>
<td>
Քարթրիջ HP CC531A (cyan)
Էյչ փի ՍԻՍԻ531Էյ (երկնագույն)
<table>
<tr><td colspan="2">Քարթրիջ CC531A
Քարթրիջ ՍԻՍԻ531Էյ</td></tr>
<tr><td>Производитель
Արտադրող</td><td>HP
Էյչ Փի</td></tr>
<tr><td>Модель
Մոդել</td><td>CC531A (№304A) (голубой)
ՍԻՍԻ531Էյ (№304 Էյ) (երկնագույն)</td></tr>
<tr><td>Тип оборудования
Սարքի տեսակը</td><td>Голубой Картридж
Երկնագույն քարթրիջ</td></tr>
</table>
</td>
<td>հատ</td>
<td>72750</td>
<td>72750</td>
<td>1</td>
<td>Կառա-վարա-կան 3-րդ շենք</td>
<td>1</td>
<td>II եռամ-սյակ</td>
</tr>
</table>

				Описание Նկարագրություն **Оригинальный картридж** Բնօրնակ քարթրիջ **Ресурс** Ռեսուրս **2800 страниц** 2800 էջ							
12.	30121500/26	Քարթջներ	Hewlett-Packard HP CC532A (yelow)	**Քարթրիջ HP CC532A (yelow)** Էյչ փի ՍԻՍԻ532Էյ (դեղին) **Քարթրիջ CC532A** Էյչ փի ՍԻՍԻ532Էյ **Производитель** Արտադրող **HP** ԷյչՓի **Модель** Մոդել **CC532A (№304A) (желтый)** ՍԻՍԻ532Էյ (№304 Էյ) (դեղին) **Тип оборудования** Սարքի տեսակը **Желтый Картридж** Դեղին քարթրիջ **Описание** Նկարագրություն **Оригинальный картридж** Բնօրնակ քարթրիջ **Ресурс** Ռեսուրս **2800 страниц** 2800 էջ	հատ	72750	72750	1	Կառա-վարա-կան 3-րդ շենք	1	II եռամ-սյակ
13.	30121500/27	Քարթջներ	Hewlett-Packard HP CC533A (magenta)	**Քարթրիջ HP CC533A(magenta)** ՍԻՍԻ533Էյ (կարմիր) **Քարթրիջ CC533A** ՍԻՍԻ533Էյ **Производитель** Արտադրող **HP** ԷյչՓի **Модель** Մոդել **CC533A (№304A) (пурпурный)** ՍԻՍԻ533Էյ (№304 Էյ) (կարմիր) **Тип оборудования** Սարքի տեսակը **Пурпурный Картридж** Կարմիր քարթրիջ **Описание** Նկարագրություն **Оригинальный картридж** Բնօրնակ քարթրիջ **Ресурс** Ռեսուրս **2800 страниц** 2800 էջ	հատ	72750	72750	1	Կառա-վարա-կան 3-րդ շենք	1	II եռամ-սյակ
31.	30121500/3	Քարթրիջներ	Canon LBP	Canon LBP 3010, Canon 85A, օրիգինալ , ISO/IEC ստանդարտին համապատասխան, գույնը՝ սև, գործարանային փաթեթավորմամբ, առնվազն 1500 էջ տպելու	հատ	32010	160050	5	Մ.Մկր-տչյան	5	III եռամ-

			3010	հնարավորությամբ:					5		սյակ
32.	30121500/4	Քարթրիջներ	HP LJ 305A CE-410-A	HP LJ 305A CE-410-A, օրիգինալ , ISO/IEC ստանդարտին համապատասխան, գույնը՝ սև, գործարանային փաթեթավորմամբ, առնվազն 2000 էջ տպելու հնարավորությամբ:	հատ	58200	116400	2	Մ.Մկր-տչյան 5	2	III եռամ-սյակ
36.	30121500/8	Քարթրիջներ	HP LJ Pro MFP M225dn	HP LJ Pro MFP M225dn, 83A CF 283A օրիգինալ , ISO/IEC ստանդարտին համապատասխան, գույնը՝ սև, գործարանային փաթեթավորմամբ, առնվազն 2000 էջ տպելու հնարավորությամբ:	հատ	58200	524700	15	Մ.Մկր-տչյան 5	15	III եռամ-սյակ
39.	30237411/1	Մկնիկ, համակարգ-չային, լարով	HP USB Optical Scroll QY777A6	HP USB Optical Scroll (Bulk Pack 100) QY777A6	հատ	58200	10500	5	Մ.Մկր-տչյան 5	5	III եռամ-սյակ

ԳՆՈՐԴ

Հ էկոնոմիկայի նախարարություն
ասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
/Հ՝ 900011033504
Հ ՖՆ աշխատակազմի
որձառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02698604

---------- Ա.Խաչատյան
ստորագրություն) Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ
Հասցե՝ ՝ ք. Երևան, Վարդանանց 18/2,
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660000446270100
ՀՎՀՀ 00861057

---------- Կ. Սուքիասյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2
« » 2020 թ. կնքված
ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/48 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի																	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տնտեսագիտական դասակարգում	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	30121500/15	5122	Քարթրիջներ	-	-	-	803160	803160	803160	803160	803160	803160	803160	803160	803160	803160	
2.	30121500/16	5122	Քարթրիջներ	-	-	-	1018500	1018500	1018500	1018500	1018500	1018500	1018500	1018500	1018500	1018500	
3.	30121500/17	5122	Քարթրիջներ	-	-	-	122220	122220	122220	122220	122220	122220	122220	122220	122220	122220	
4.	30121500/18	5122	Քարթրիջներ	-	-	-	69840	69840	69840	69840	69840	69840	69840	69840	69840	69840	
5.	30121500/19	5122	Քարթրիջներ	-	-	-	78570	78570	78570	78570	78570	78570	78570	78570	78570	78570	

7.	30121500/21	5122	Քարթրիջներ	-	-	-	119970	119970	119970	119970	119970	119970	119970	119970	119970	119970
8.	30121500/22	5122	Քարթրիջներ	-	-	-	119970	119970	119970	119970	119970	119970	119970	119970	119970	119970
9.	30121500/23	5122	Քարթրիջներ	-	-	-	119970	119970	119970	119970	119970	119970	119970	119970	119970	119970
10.	30121500/24	5122	Քարթջներ	-	-	-	78570	78570	78570	78570	78570	78570	78570	78570	78570	78570
11.	30121500/25	5122	Քարթջներ	-	-	-	72750	72750	72750	72750	72750	72750	72750	72750	72750	72750
12.	30121500/26	5122	Քարթջներ	-	-	-	72750	72750	72750	72750	72750	72750	72750	72750	72750	72750
13.	30121500/27	5122	Քարթջներ	-	-	-	72750	72750	72750	72750	72750	72750	72750	72750	72750	72750
31.	30121500/3	5122	Քարթրիջներ	-	-	-	160050	160050	160050	160050	160050	160050	160050	160050	160050	160050

32.	30121500/4	5122	Քարթրիջներ	-	-	-	-	-	-	116400	116400	116400	116400	116400	116400	116400
36.	30121500/8	5122	Քարթրիջներ	-	-	-	-	-	-	524700	524700	524700	524700	524700	524700	524700
39.	30237411/1	5122	Մկնիկ, համակարգչային, լարով	-	-	-	-	-	-	10500	10500	10500	10500	10500	10500	10500
	Ընդամենը՝						**2909070**	**2909070**	**2909070**	**3560670**	**3560670**	**3560670**	**3560670**	**3560670**	**3560670**	**3560670**

ԳՆՈՐԴ

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
/Հ՝ 900011033504
ՀՀ ՖՆ աշխատակազմի
որդառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02698604

Ա. Խաչատրյան
ստորագրություն) Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ
Հասցե՝՝ ք. Երևան, Վարդանանց 18/2,
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660000446270100
ՀՎՀՀ 00861057

Կ. Սուքիասյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 3
24.02. 2020թ. կնքված
ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/48-44-20 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
24.02. 2020թ. կնքված
ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-19/48 -44-20 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն